ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

0078 Երևան, Հալաբյան 41ա, հեռ. 010 594192
էլ. փոստ hayrapetyan.gevorg@moj.am

N _____
«__»_____ 2020թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(ՀՀ, ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ)

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան 2020 թվականի դեկտեմբերի 4-ի (դեկտեմբերի 7-ին ստացված) Ձեր գրության, և ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 15) կետով՝ որպես խորհրդատվություն հայտնում ենք հետեւյալը.

Անդրադառնալով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ նաեւ՝ Կազմակերպություն) հարցմանն ի պատասխան ՀՀ ոստիկանության տրամադրած պատասխանի այն հատվածին, որը վերաբերում է անձնական տվյալների պաշտպանության իրավունքին, նախ պետք է նշել, որ Կազմակերպությունը խնդրել է տրամադրել ինչպես տուգանված ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց ցանկը: Միաժամանակ, իր պատասխանում ոստիկանությունը նշել է «Թե որ լրատվամիջոցների կամ ում նկատմամբ են կայացվել որոշումները, ապա՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, տեղեկատվության տրամադրումը նշված մասով մերժվում է՝ հաշվի առնելով, որ հիշյալ տեղեկատվության տրամադրմամբ կխախտվի

տվյալ լրատվամիջոցը ներկայացնողի (տուգանվողի) օրենքով պաշտպանվող անձնական կյանքի գաղտնիության իրավունքը:»:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալ է « (...) ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը.»:

Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը (այսուհետ նաեւ՝ Գործակալություն) հարկ է համարում ընդգծել, որ Կազմակերպության պահանջած տեղեկությունների շարքում անձնական տվյալներ են միայն այն տեղեկությունները, որոնք վերաբերում են ֆիզիկական անձանց, այնինչ բացառապես իրավաբանական անձանց (խոսքը չի գնում իրավաբանական անձի հիմնադիրների կամ տնօրենների կամ իրավաբանական անձի հետ կապակցված այլ ֆիզիկական անձանց մասին) վերաբերող տեղեկությունները, այդ թվում բացառապես իրավաբանական անձանց տուգանելու հանգամանքը որոշակիորեն դուրս է անձնական տվյալների, այդ թվում՝ անձնական կյանքի անձեռնմխելիության պաշտպանության ոլորտից:

Բացի վերոնշյալը,«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «1. Անձնական տվյալներ մշակելը օրինական է, եթե՝ 1) տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը, բացառությամբ սույն օրենքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, 2) մշակվող տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից»: Նույն օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «5. Առանց տվյալների սուբյեկտի համաձայնության անձնական տվյալներ կարող են մշակվել, եթե տվյալներ մշակելն ուղղակիորեն նախատեսված է օրենքով»:

Իր հերթին, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ տեղեկություն է ի թիվս այլնի նաեւ անձի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալը (տես նաեւ նույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը եւ 9-րդ հոդվածը, որոնք նախատեսում են տեղեկությունների հրապարակումը կամ հարցման հիման վրա տրամադրումը): Հետեւաբար, **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ուղղակիորեն անձնական տվյալների մշակում նախատեսող օրենք է:** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սպառիչ թվարկում է տեղեկության (ներառյալ՝ անձի վերաբերյալ) տրամադրումը մերժելու հիմքերը, իսկ նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ «3. Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության

տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը:»: **Ընդ որում, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը նույնպես չի սահմանում կոնկրետ այս կամ այն տվյալի գաղտնիք լինելը, այլ բլանկետային նորմ է, որը հղում է անում տեղեկության կարգավիճակին, որը պետք է սահմանված լինի այլ վերաբերելի իրավական ակտերով:**

Վերոնշյալից բխում է, որ հարցման հիման վրա անձի վերաբերյալ տեղեկության տրամադրումը կարող է մերժվել **ոչ թե անձնական տվյալ լինելու, այլ որեւէ գաղտնիք, այդ թվում՝ մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիք լինելու դեպքում:**

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքն **ինքնին չի արգելում այս կամ այն անձնական տվյալի մշակումը, այդ թվում՝ հրապարակումը կամ փոխանցումը, չի սահմանում պետական մարմնի կողմից անձնական տվյալներ տրամադրելու կամ դրա տրամադումը մերժելու կարգը եւ պայմանները, ինչպես նաեւ չի սահմանում այս կամ այն անձնական տվյալների՝ գաղտնիք լինելու կարգավիճակը:** «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում անձնական տվյալները **չեն նույնանում գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հետ, իսկ անձնական տվյալը, այդ թվում՝ անձնական կյանքի տվյալը, տվյալի տեսակի անվանումն է, այլ ոչ թե ռեժիմը** (այսպես, անձնական տվյալները կարող են լինել նաեւ հանրամատչելի): Իր այս դիրքորոշմանը Գործակալությունը հանգել է թիվ N-006/01/19 վարչական գործով կայացված որոշմամբ՝ համադրելով ՀՀ Սահմանադրության 31-րդ եւ 34-րդ հոդվածները: Իսկ թիվ N-069/10/19 վարչական գործով կայացված որոշմամբ վերահաստատելով իր այս դիրքորոշումը՝ Գործակալությունը նաեւ ընդգծել է, որ վերոնշյալը չի նշանակում, որ անձնական տվյալները չեն կարող համարվել կամ դառնալ այնպիսին կամ մշակվել այնպես, որ խախտեն մարդու մասնավոր (անձնական) կյանքի անձեռնմխելիության կամ անձնական կյանքի հարգանքի իրավունքը, բայց միաժամանակ անձնական տվյալն ինքնին անձնական տվյալ լինելու ուժով դեռեւս պարտադիր չէ, որ լինի միջամտող մարդու անձնական կյանքին, իսկ միջամտող լինելու դեպքում պարտադիր չէ, որ միջամտությունը լինի ապօրինի. այլ կերպ ասած՝ անձնական տվյալն ինքնին անձնական տվյալ լինելու ուժով դեռեւս գաղտնիք չէ, **հետեւաբար, սխալ կլինի այն եզրակացությունը, որ տեղեկության անձնական տվյալ կամ անձնական կյանքի տվյալ հանդիսանալն ինքնին ենթադրում է այդ տվյալները տրամադրելու արգելք:**

Վերոնշյալն արտացոլվել է նաեւ Գործակալության մշակած «Պետական մարմինների կողմից անձնական տվյալների մշակման ուղեցույց»-ում, որտեղ Գործակալությունը նշել է, որ[1]

- Անձնական տվյալն ինքնին գաղտնիք չէ:
- Անձնական տվյալները երրորդ անձանց կարող են փոխանցվել կամ այլ կերպ մատչելի դարձվել միայն օրենքներով, այդ թվում՝ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով:
- Պետական մարմնի տնօրինության տակ գտնվող անձնական տվյալներին երրորդ անձանց մատչելիությունը կամ այդ տվյալների հանրամատչելիությունը սահմանափակելու անհրաժեշտության դեպքում անձնական տվյալները կամ անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերը պետք է դասակարգվեն որպես որեւէ գաղտնիք:

Վերոնշյալի համատեքստում Գործակալությունն ուշադրություն է դարձնում, որ մի կողմից ՀՀ ոստիկանության պատասխան գրության մեջ նշված չէ այն իրավական ակտը (համապատասխան իրավական նորմը), որով վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը համարվում է անձնական կյանքի գաղտնիք: Մյուս կողմից, Գործակալության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հանգամանքի մասին տեղեկություններ առկա են նաեւ հանրամատչելի աղբյուրներում. օրինակ azdarar.am կայքում գրավոր վարչական ակտերի հրապարակման բաժնում ՀՀ ոստիկանության կողմից որպես հայտատու հրապարակված են ֆիզիկական անձանց համադրելի վարչական պատասխանատվության (օրինակ, արտակարգ դրության ընթացքում ազատ տեղաշարժվելու պայմանների խախտման համար) ենթարկելու վերաբերյալ որոշումներ: Ուստի, Գործակալությանն ուղղված Ձեր գրության առիթով Գործակալությունը դիմել է ՀՀ ոստիկանությանը՝ պարզելու համար, թե Կազմակերպության հարցմանը պատասխանելիս որ իրավական ակտով (որ իրավական նորմով) է վարչական պատասխանատության ենթարկված լինելու հանգամանքը համարվել անձնական

[1]Տես՝ https://www.moj.am/storage/uploads/123Uxecuyc-cucumner.pdf եւ https://www.police.am/%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D5%BD%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D5%B8%D6%82%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%D5%B6%D5%A5%D6%80.html

կյանքի գաղտնիք: Ստացված պատասխանի արդյունքում Ձեզ կտրամադրենք լրացուցիչ խորհրդատվություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՀՀ ԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Մարինե Մկրտչյան
Անձնական տվյալների պաշտպանության գործակալության
Վարչական վարույթների իրականացման բաժնի գլխավոր մասնագետ
Հեռ. (010) 594-195